ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1960 Թ. ԱՊՐԻԼ 22-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում գոհունակությամբ ծանոթացավ Վեհափառ Հայրապետի սիրո և միության սրբատառ նոր կոնդակի գրության՝ Անթիլիասի Աթոռի հետ բանակցություններ վերսկսելու համար, հօգուտ Սփյուռքի եկեղեցական միասնության վերականգնման և հայ կյանքի խաղաղության։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ, Երուսաղեմի հայոց Պատրիարքության շուրջ ստեղծված նոր կացությունը հանգամանորեն ուսումնասիրելու և Մայր Աթոռին ու Վեհափառ Հայրապետին մանրամասն ու ճշգրիտ զեկուցագիր ներկայացնելու համար, որոշեց հանուն Մայր Աթոռի պատվիրակություն ուղարկել Երուսաղեմ և Բեյրութ։ Պատվիրակությանը կգլխավորի Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում որոշեց հայտարարել փակ մրցանակաբաշխություն՝ Մայր Տաճարի Իշման Ս. Սեղանի բարձրաքանդակների նախագծի պատրաստության մասին, որտեղ պատկերված կլինեն Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի կերպարները։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Մայր Աթոռի 1959 թվականի ամփոփ բյուջեի կատարողականի մասին զեկուցեց Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, զեկուցումը ընդունելով ի գիտություն, հանձնարարեց Վերստուգիչ հանձնաժողովին ստուգել բոլոր ծախսերը ըստ հոդվածների և ներկայացնել Գերագույն Հոգևոր Խորհրդին։

Ապա նույն նիստում Մայր Աթոռի 1960 թվականի ամփոփ նախահաշվի մասին զեկուցեց նորից Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչը։

Հետ քննության, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց հաստատել 1960 թվականի ամփոփ նախահաշիվը՝ մի շարք դիտողություններով։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կազմվեց Մայր Աթոռի շրջափակում և նրանից դուրս կատարվող շինարարական աշխատանքները հսկելու համար հատուկ հանձնախումբ, որի կազմի մեջ ընտրվեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ա. Աղաջանյանը և Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Ե. Ալեքսանյանը։

1960 Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Վեհափառ Հայրապետը հաղորդեց Ամերիկայի Միացյալ Նահանգները կատարելիք իր ուղևորության մասին՝ ընդառաջելու համար ամերիկահայ թեմերի պաշտոնական, ջերմ հրավերներին։

Վեհափառ Հայրապետը, արտասահման կատարած իր հովվապետական ուղևորության ընթացքում, կայցելի Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայ գաղութները։

Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին կընկերանան Վրաստանի հայոց թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը որպես գավազանակիր և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետի այս հաղորդումը և այն գնահատեց որպես Հայ Եկեղեցու և Սփյուռքի հայ կյանքի խաղաղության, միասնության և համերաշխության ազնիվ նպատակով կատարվող հովվապետական առաքելություն։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ միևնույն նիստում որոշում ընդունեց մասնավոր կոչով դիմել Սփյուռքի ազգային-եկեղեցական մարմիններին, մշակութային հաստատություններին, մամուլին՝ Մայր Աթոռի թանգարանը հնագիտական, եկեղեցական արվեստի վերաբերյալ նոր ցուցանմուշներով հարստացնելու համար։



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ»-Ը ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ՎՐԱ